



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2018

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո լամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 94

ԱՍՏՈՒԱԾ ԲՈԼՈՐԻՆ ԴԱՏԱԽՈՐԸ

Արդարահապոյց Աստուած, ցոյց քուր արդարութիւնդ:

Ել, ով Դարաւոր ամբողջ աշխարհի,

ամբարտաւան մարդոց հապուցանէ արժանին:

Մինչեւ ե՛րբ, Տէր, մինչեւ ե՛րբ ամբարիշտները պիտի յիտորպան,

չարագործները գոռոզ խօսքերով պիտի արտայայտուին,

եւ իրենց չարիքներով պիտի հպարտանան:

Երանի այն մարդուն, ով Տէր, որ դուն ինքդ կը սրբագրես,

եւ Օրէնքովդ կը դաստիարակես:

Դժբախտութեան օրերուն հանգստութիւն կու տաս անոր,

մինչեւ որ ամբարիշտին խորխորապը պարտաստուի:

Որովհետեւ Տէրը չի մոռնար իր ժողովուրդը,

բնաւ չի լքեր անոնք՝ որոնք իրեն կը պարկանին,

մինչեւ դատաստանի մէջ արդարութիւնը վերահաստատուի,

եւ սրբով ուղիղները արդարութեան հետեւին:

Ո՛վ իմ դաքս պաշտպանեց՝ չարագործներուն դէմ,

ո՛վ ինձի թիկունք կազնեցա՝ անիրաւութիւն գործողներուն դէմ:

Եթէ Տէրը ինձի ջօզնէր՝ շաքոնց Լռութեան աշխարհին բնակիչ եղած կ'ըլլայի:

Ամէն անգամ որ խորհեցայ՝ թէ իյնալու վրայ եմ,

քու սէրդ, Տէր, օգնութեան հասաւ ինձի:

Ամէն անգամ որ բազմացան մտախոգութիւններս,

մխիթարեցիր եւ հրճուեցուցիր սիրքս:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ա ՆԱՄԱԿ
ԳԼՈՒԽ 3:11-17

ՄԻՐԵՆՔ ԻՐԱՐ՝ ԳՈՐԾՈՎ ԵՒ ՈՉ ԽՕՍՔՈՎ (3:11-24)

Աստուծոյ հարազատ որդի ըլլալու պայմանը՝ արդարութիւն գործել եւ եղբայրսիրութիւնն է: Իսկ ով որ այս երկուքը չունի Աստուծոյ հարազատ գաւակ չէ: Ընդհանրապէս երբ յայտնի մարդու մը գաւակն ենք կը հպարտանանք: Իսկ եթէ չենք, որոշ փրամադրութեամբ կը լեցուինք անոնց նկատմամբ, որոնք յայտնի մարդու գաւակ են. կամ անփարբեր ենք, կամ երանի կու փանք եւ կամ նախանձով կը լեցուինք:

Ահա նոյն է պարագան երբ Աստուծոյ հարազատ գաւակն ենք: Շարերուս համար հպարտանք է: Շարերու համար երանի կու փան անոնց, որոնք Աստուծոյ հարազատ գաւակն են, իսկ շարերու համար կարեւոր չէ որո՞ւ գաւակն է:

Յովհաննէս Առաքեալ Աստուծոյ հարազատ գաւակ ըլլալու հանգամանքը ցոյց փուստ արդարութեամբ ապրելու ու գործելու, եւ այդ արդարութեան մէկ արտայայտութիւնը եղբայրսիրութիւնն է: Այդ միտքը շարունակելով, Յովհաննէս Առաքեալ անգամ մը եւս կը յիշեցնէ այն պատուիրանը որ սկիզբէն լսեցինք. «սիրեցէք իրար»: Այն պատուիրանը, որ Յիսուս Ինք փուստ իր աշակերտներուն. «**Այնպէս ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ զիրար սիրեցէք**» (Յովի 13:34): Սիրելիներ, սիրոյ այս պատուիրանը յարուկ է, միայն անոնց, որոնք Աստուծոյ սիրով լեցուած են, որովհետեւ խորքին մէջ մարդ արարածը իր անկումէն յետոյ այդ սերը կորսնցուց, որուն իբրեւ հետեւանք փեղի ունեցաւ եղբայրսպաննութիւն, ինչպէս Առաքեալ ինք կը յիշէ Կայէնի եւ Աբելի պարագան: Սա կը նշանակէ, որ մարդ արարածը այդ սերը չունի: Մարդը բնածին սիրոյ զգացմունքներ ունի, սակայն, այդ սերը պայմանաւորեալ սեր է, որ կը նշանակէ, յանկարծ այդ սերը կրնայ վերջ գրնել, այդ սերը փոխադարձ անոր, որմէ կու գայ նոյնանման սեր: Իսկ Քրիստոսի փոխանցած պատուէրը այն սիրոյ մասին է, այն ինչ Ինք ցոյց փուստ իր իսկ կեանքովը:

Երկրորդ, Յովհաննէս Առաքեալ Կայէնի օրինակը յիշելով, ցոյց կու փայ, որ Կայէն ուրիշ բան չըրաւ եթէ ոչ Չարին օրինակին հետեւեցաւ, այնպէս ինչպէս Չարը ինք մարդասպան է, նոյնպէս ալ երբ մարդը մեղաւոր ու անկում ունեցաւ, պարպուեցաւ աստուածային սերէն ու հետեւեցաւ Չարի օրինակին: Քրիստոս եւս այս բացատրութեամբ ցոյց կու փայ, որ Օրէնքի ուսուցիչները եւ փարիսեցիները ուրիշ բան չեն ըներ եթէ ոչ իրենց հօր գործն է որ կը շարունակեն, այսինքն՝ սպաննութիւն (Յովի 8:34-47): Այսպէս նաեւ յստակութիւն մը կու փայ Յովհաննէս Առաքեալ, «սիրեցէք իրար», այսինքն՝ սիրել ոչ թէ բոլորին, այլ՝ մեր նմաններուն, այսինքն՝ անոնց որոնք նոյն Տան անդամներն են: Սա չի նշանակէր, որ միւսները արել, բայց Առաքեալին խօսքը ուղղուած է Եկեղեցիին: Ուրեմն, սեր հանդէպ բոլոր անոնց, որոնք Եկեղեցոյ սուրբ աւագանէն վերստին ծնան, դառնալու Քրիստոսով իրարու քոյրեր եւ եղբայրներ: Վերստին ծնունդն է, որ մեզի կը շնորհէ, կը պարգեւէ այդ աստուածային սերը, այլապէս մենք ի ծնէ այդ սերը չունինք: Ընդհանրապէս մեր ունեցած սերը անձնական է, եսասիրութիւն է, քան՝ անդրանձնական:

Իսկ թէ Կայէն ինչո՞ւ սպաննեց իր եղբայրը. որովհետեւ իր գործերը չար էին, մինչ եղբօր գործերը՝ բարի: Ինչո՞վ չար էին Կայէնի գործերը: Կայէնին մէջ արթնցած արելութիւնը, թշնամութիւնը եւ նախանձը: Եւ արդէն կը փեսնենք, առաջին իսկ առիթով, երբ մարդը մեղքը, անհնազանդութիւնը գործեց, եւ Աստուծոյ կողմէ փրուած դատաւճիռը օձին ըսելով. «**Քու սերունդիդ եւ անոր սերունդին միջեւ թշնամութիւն**» (Ծննդ 3): Սա արդէն ուրիշ բան չէր եթէ ոչ անմիջական արդիւնքը մեղքին, անհնազանդութեան, որ արդէն շուտով արտայայտուեցաւ յաջորդ սերունդին մէջ:

Յովհաննէս Առաքեալ կը զգուշացնէ, կը յորդորէ, կը խրատէ, որ հաւաքացեալ քրիստոնէաները չզարմանան երբ աշխարհը արել զիրենք: Որովհետեւ այս պարագային Կայէնը կը դառնայ ներկայացուցիչը աշխարհին, որ այնքան արելութեամբ ու նախանձով լեցուն էր, որ մինչեւ իսկ իր եղբայրը սպաննեց: Նոյնպէս ալ աշխարհին վերաբերմունքը քրիստոնէայ հաւաքացեալներուն նկատմամբ: Որովհետեւ աշխարհի չար գործելակերպը կը յայտնուի քրիստոնէայ հաւաքացեալներու բարի գործով:

Առաքեալը կը վստահեցնէ եւ ցոյց կու փայ փարբերութիւնը Աստուծոյ հարազատ գաւակին եւ աշխարհին պարկանդղին, ըսելով՝ «մենք գիտենք», ի՞նչ գիտենք: Գիտենք՝ թէ մահէն կեանքի անցած ենք: Ո՞րքէ գիտենք, որովհետեւ մեր եղբայրները կը սիրենք: Այլապէս պիտի չկարենային սիրել: Հիմա ալ եթէ երբեք փակալին չենք սիրել, կը նշանակէ թէ կեանքի չենք անցած: Իսկ մահէն կեանքի անցնիլ

կը նշանակէ փոփոխութիւն մը րեղի ունեցած է, եւ այդ փոփոխութեան նշանը՝ իրար սիրելն է: Քրիստոս պիտի ըսէ. **«Ձեր իրար սիրելով մարդիկ պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներս եք»** (Յովի 13:35): Այլապէս չենք: Զիրար սիրելու նշանը ապահովութիւնը կու տայ մեզի, եւ վստահութիւնը, որ մահէն կեանքի անցած ենք:

Իսկ ով որ իր եղբայրը չի սիրեր, ուրեմն՝ կ'արէ, մահուան ենթակայ է եւ մարդասպան է: Մա կը նշանակէ, երբ կ'արենք, ոչ թէ միայն մահուան ենթակայ ենք, այլ նաեւ կ'ուզենք անոր մահը: Որովհետեւ արելութիւնը մեզ կ'առաջնորդէ մինչեւ հոն: Անոր համար ալ Յովհաննէս Առաքեալ յստակ ուղղութիւն կու տայ, կամ սիրել կամ արել, կամ լոյս կամ խաւար, կամ կեանք եւ կամ մահ:

«Մենք այդ սէրը ճանչցանք անով՝ որ Քրիստոս իր կեանքը գոհեց մեզի համար» (16 հմր): Ես կրնամ ճանչնալ, կրնամ ունենալ այդ սէրը երբ Քրիստոսով վերստին ծնած եմ, երբ իսկապէս վայելած եմ Քրիստոսի սէրը, Իր իսկ կեանքը գոհելով ինձի համար: Այլապէս, չեմ կրնար ունենալ, ոչ ալ ճանչնալ ու հասկնալ այդ սէրը: Որովհետեւ այդպիսի սէր կ'արտայայտուի գոհագործումով: Քրիստոս պիտի ըսէ. **«Մեծագոյն սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը գոհէ իր բարեկամներուն համար»** (Յովի 15:13): Այս պարագային, Քրիստոս Ինք է իսկական գոհը, որ սիրոյ արտայայտութիւնն է, մեր պարագային, գոնէ այդ սէրը կը յայտնենք, նմանօրինակը ըլլալով Քրիստոսի, երբ մեր ժամանակը, մեր կարողութիւնները, մեզի փրուած շնորհները, ծառայութեամբ, աղօթքով, փարբեր կերպերով իսպաս կը դնենք մեր եղբայրներուն ու քոյրերուն համար: Այլ խօսքով՝ մեզ փալու առիթը որ չըլլանք անփարբեր, ինչ որ այսօրուան իրականութիւնն է: Միայն մեր եսին մասին մտածող: Այլապէս եթէ երբեք Աստուծոյ սէրը մեր մէջ ունինք, անպայմանօրէն մեր գոյթը կը շարժի, այնպէս ինչպէս Աստուծոյ գոյթը շարժեցաւ անկեալ, մեղաւոր մարդուն համար, զայն փրկելու համար: Ճիշդ այս միտքն է, որ Քրիստոս կը փոխանցէ ըսելով. **«Գթած եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը գթած է»** (Ղուկ 6:36-38):

